ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՐՁ

Սպասավորություն՝ կոչ Տիրոջից և Մարգարեից

Երեց Ջեյմս Բ. Մարտինո,
Արևելյան Եվրոպայի
Տարածաշրջանի
Նախագահ

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, որտե՞ղ էիք դուք, երբ առաջին անգամ լսեցիք, թե Նախագահ Նելսոնն ինչպես էր բացատրում մեզ, որ այլևս չի լինելու տնային ուսուցման և այցելությամբ ուսուցման ծրագիրը: Իր մարգարեների միջոցով Տերը հայտարարեց «սպասավորության մի ավելի նոր, ավելի բարձր և ավելի սուրբ եղանակի մասին»: Երբ մենք գործադրենք այդ ջանքերը, «դռներ կբացվեն և մարդիկ կօրհնվեն» (Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի ելույթը գերագույն համաժողովի ղեկավարների ժողովին, մարտի 29, 2018թ.): Դուք մտածե՞լ եք այդ մասին: Տերն ի՞նչ է ակնկալում ինձանից և ձեզանից:

Փրկիչն ուսուցանել է. «Նոր պատուիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրէք. Ինչպէս *ես ձեզ սիրեցի,* որ դուք էլ իրար սիրէք» (Հովհաննես 13.34, շեղագիրն ավելացված է): Սա պատվիրան է, բայց միևնույն ժամանակ՝ հրավեր: Սա Նրան նմանվելու հրավեր է: Մենք պիտի ձգտենք սիրել այնպես, ինչպես Նա էր սիրում, այլապես չենք կարող իրապես դառնալ այն ճշմարիտ աշակերտը, որը Նա ցանկանում էր, որ դառնանք: Այս հրավերը կօգնի մեզ մտածել նաև ուրիշների մասին և օգնության հասնել նրանց: Օգնության հասնել ուրիշներին, անկեղծորեն օգնել նրանց և ծառայել նրանց. սա հենց այն է, ինչ Տերը կաներ: Երբ մենք անենք սա մաքուր սիրով, կզարգացնենք այդ Քրիստոսանման հատկանիշները, որոնց կարիքը մենք ունենք:

Նախագահ Նելսոնը հավելեց, որ սպասավորող եղբայրներն ու քույրերը «Տիրոջից աղոթքով հայտնություն կփնտրեն, երբ իմանան իրենց անդամների կարիքները: Հետո նրանք կզբաղվեն նրանց կարիքներով՝ ինչպես կառաջնորդի և կուղղորդի Հոգին: Նրանք կսպասավորեն ոգեշնչված հոգատարությամբ և անձնվեր ծառայությամբ՝ բարձրացնելով ու ամրապնդելով մարդկանց»: Ո՞ւմ եք դուք այցելում: Ինչպե՞ս կարող եք օգնել նրանց: Դուք ստիպված չեք սպասել նշանակման: Դիմեք Տիրոջը և աղոթքով հարցրեք Նրան, թե ինչպե՞ս կարող եք գործիք լինել Նրա ձեռքերում ուրիշներին օրհնելու համար: Նա ձեզ հրաշալի տպավորություններ կտա, երբ խորհեք այն մասին, թե ինչ կարող եք անել, որպեսզի օգնեք նրանց, ում սպասավորում եք:

Երբեմն մենք կարող ենք մտածել, որ չենք ցանկանում միջամտել ուրիշի կյանքին կամ մեր գործը չէ, թե նրանք ինչ են անում: Բայց հիշեք, որ «Արդյո՞ք ես եղբորս պահապանն եմ» հարցի իսկական պատասխանը «այո»-ն է: Մենք բոլորս քույրեր ու եղբայրներ ենք և պետք է օգնենք միմյանց: Սպասավորության այս նոր ծրագիրը մեզ թույլ է տալիս հասնել մարդկանց բազմաթիվ եղանակներով: Մենք կարող ենք (և պետք է) այցելենք նրանց ժամանակ առ ժամանակ, բայց երբեմն կարող ենք զանգահարել և հարցնել նրանց որպիսությունը՝ ասելով, որ կարոտում ենք նրանց այն օրերին, երբ չեն հաճախում Եկեղեցի կամ պարզապես հաղորդագրություն ուղարկենք, քաջալերելով, երբ նրանք, գուցե, ճնշված են: Մշտապես հարցրեք Տիրոջը, թե ինչ կարող եք անել: Խնդրեք նրանց, ում դուք սպասավորում եք, զգալ Հոգին իրենց կյանքում: Գործիք դարձեք, որպեսզի օրհնեք ուրիշներին: Երբ մենք խորապես ներգրավվենք Աստծո ծառայության մեջ, կգտնենք մեր իսկական կոչումը, կգտնենք ուրախություն և խաղաղություն, մինչ այս օրհնությունները տալիս ենք ուրիշներին:

Մենք պետք է հարցնենք ինքներս մեզ. «Արդյո՞ք ես այնպիսի սպասավոր եմ, ինչպիսին Տերը կուզեներ, որ լինեի», «Ուրիշ ի՞նչ կարող եմ անել, որպեսզի հասնեմ նրանց սրտերին, ում սպասավորում եմ»: Այս պատասխանները կգան Սուրբ Հոգու միջոցով, եթե հարցնենք ճշմարիտ անկեղծությամբ: Մեզանից յուրաքանչյուրը թող կառուցի Տիրոջ Եկեղեցին, միասին օգնելով միմյանց, որ ավելի մոտենանք Տիրոջը: ■

Ինչո՞ւ մենք երբեմն պատասխան չենք ստանում վերևից

Սերգեյ Սեմյոնով
Արևելյան Եվրոպայի Տարածաշրջանի Սեմինարիաների
և Կրոնի Ինստիտուտների Տնօրեն

Մեզանից ո՞վ չէր ցանկանա միշտ իմանալ ճիշտ լուծումը: Ինչ հրաշալի կլիներ խուսափել մարդկանց մասին սխալ եզրակացություններ անելուց կամ կյանքի սխալ ուղի ընտրելուց: Երիտասարդ մարդիկ ինչպե՞ս կարող են խուսափել իրենց հասակակիցների ճնշումներին տեղի տալուց: Ինչպիսի՞ կրթություն պետք է ստանամ և որտե՞ղ: Իրականում ի՞նչ պիտի դառնամ: Արդյո՞ք պիտի փոխեմ իմ ներկայիս աշխատանքը, թե՞ ավելի լավ է սպասեմ: Ու՞մ հետ ամուսնանամ: Ինչպե՞ս ճիշտ դաստիարակեմ երեխաներիս: Ինչպե՞ս կարող եմ հաղթահարել իմ թուլությունները: Ինչպե՞ս կարող եմ շարունակել երջանիկ մնալ իմ կյանքի փորձությունների մեջ:

Մեզանից յուրաքանչյուրը բախվում է նմանատիպ կամ այլ խնդիրների: Պողոս Առաքյալը մարգարեացել է և նախազգուշացրել, «որ ետի օրերումը չար ժամանակներ կգան» (Բ Տիմոթեոս 3.1-7): Սակայն այս հայտնության մեջ, ի լրումն թվարկված փորձությունների և խնդիրների, Պողոսն ասում է, թե ինչ կարող ենք անել մեզ պաշտպանելու համար. «Բայց դու հաստատ կաց նորանցում, որ սովորեցիր եւ հաւատացիր. Եւ գիտենալով թէ ումից սովորեցիր. Եւ որ մանկութիւնից սուրբ գրքերը գիտես, որ կարող են քեզ իմաստուն անել փրկութեան համար այն հաւատքի ձեռովն որ Քրիստոս Յիսուսումն է» (Բ Տիմոթեոս 3.14-17): Սուրբ գրությունները պարունակում են թե՛ հոգևոր պաշտպանության զորության, և թե՛ անձնական հայտնության զորության բանալիները:

Իր Եկեղեցում Տերը երկու ծրագիր է հաստատել երիտասարդների համար, որպեսզի յուրաքանչյուր մարդ հնարավորություն ունենա ձեռք բերել այդ անգին բանալիները: Դրանք Սեմինարիայի և Կրոնի Ինստիտուտների ծրագրերն են: Նախագահ Բոյդ Ք. Փաքերն ասել է. «Երեխաները, ում վաղ տարիքից ուսուցանում են սուրբ գրությունների հասկացողությունը, կիմանան, թե որ ճանապարհով պիտի քայլեն և ավելի շատ հակված կլինեն մնալ այդ ճանապարհին: Նրանք, ովքեր մոլորվում են, վերադառնալու կարողություն կունենան և օգնության միջոցով կարող են գտնել ետդարձի ճանապարհը» (Նախագահ Բոյդ Ք. Փաքեր, «Հոգևոր պաշտպանության բանալին»):

Երբեմն մենք հարցերով և ցանկություններով դիմում ենք Տիրոջը, մոռանալով, որ Նրա հայտնությունները համարյա միշտ տրվում են մեզ սուրբ գրությունների միջոցով: Զարմանալի չէ, որ մենք դրանք կոչում են Աստծո Խոսք. «Մնվեք Քրիստոսի խոսքերով. քանզի ահա, Քրիստոսի խոսքերը կասեն ձեզ բոլոր բաները, որ դուք պետք է անեք» (2 Նեփի 32.3): Այդպիսի պահերին մենք նման ենք մի մարդու, ով ուղարկում է իր խնդրանքները նամակով, բայց նեղություն չի կրում գնալ և փոստարկղից ստանալ պատասխանը:

Սուրբ գրությունները նման են լույսի ճառագայթների, որոնք լուսավորում են մեր միտքը և պատրաստում մեզ վերևից եկող առաջնորդությանն ու ոգեշնչումին: Տերը բազմիցս մեզ խորհուրդ է տալիս՝ նախ փնտրել Աստծո արքայությունն ու Նրա արդարությունը, (Մատթեոս 6.33, Ղուկաս 12.31, 3 Նեփի 13.33), սակայն, երբ գալիս

SCOTT LAW

է այս պարզ թվացող ընտրությունը կատարելու պահը, մենք հաճախ ուղղակի երկմտում ենք և, այդպիսով, ամենակարևոր բաներին ժամանակ ենք հատկացնում, երբ ժամանակի ավելցուկ ենք ունենում:

Ծնողնե՜ր, խնդրում ենք ձեզ, օգնեք ձեր երեխաներին այս ուսումնական տարում սեմինարիայի դասերը դարձնել իրենց առօրյա գործունեության անբաժանելի մասը: Սուրբ գրությունների ուսումնասիրությունը դարձրեք ձեր առօրյա կյանքի մի մասը և դուք կտեսնեք, թե ինչ օրհնություններ կհետևեն դրան:

Սուրբ գրություններում մենք լսում ենք նախազգուշացնող ձայնի արձագանքը և մեծ աջակցության աղբյուր ենք գտնում: Ապրելով գայթակղություններով ու խաբեությունով լի աշխարհում, մենք չենք կարող անտեսել Աստվածային պաշտպանությունը սատանայից: Տերը հրաշալի խոստումներ է տալիս նրանց, ովքեր լուրջ են ընդունում այն ամենը, ինչը սուրբ է (Վարդապետություն և Ուխտեր 7.12): «Եվ ես ասացի նրանց, որ դա Աստծո խոսքն է, և նրանք, ովքեր ականջ կդնեն Աստծո խոսքին և ամուր կբռնեն դրանից, երբեք չեն կորչի. Ոչ էլ գայթակղությունները և հակառակորդի կրակոտ նետերը կարող են հաղթել նրանց՝ կուրացնելով, տանելով նրանց դեպի կործանում» (1 Նեփի 15.24):

«Այո, մենք տեսնում ենք, որ ով որ կամենա, կարող է կառչած մնալ Աստծո խոսքին, որը կենդանի է և հզոր, որը կտոր-կտոր է անում դևի ողջ խորամանկությունը և ծուղակները և խաբեությունները, և առաջնորդում է Քրիստոսի մարդուն մի անձուկ ու նեղ ուղիով՝ այն հավիտենական թշվառության անդունդի վրայով, որը պատրաստված է՝ կլանելու ամբարիշտներին, և նրանց հոգիները, այո, նրանց անմահ հոգիները հասցնում է Աստծո աջ կողմը՝ երկնքի արքայություն, որ նստեն Աբրահամի և Իսահակի և Հակոբի և մեր բոլոր սուրբ հայրերի հետ, և այլևս դուրս չգնան» (Հելաման 3.29-30):

Սեմինարիայի և Կրոնի Ինստիտուտների նոր ուսումնական տարին սկսվել է սեպտեմբերին: Մենք ակնկալում ենք մեր դասարաններում տեսնել 14-30 տարեկան երիտասարդ մարդկանց: Յուրաքանչյուր ուսանող անգնահատելի է և իր եզակի ավանդն է ներդնում այս գործում: Այս տարի մենք կուսումնասիրենք Վարդապետություն և Ուխտերը: Եկեղեցու պատմության այս ժամանակաշրջանը լի է զարմանալի իրադարձություններով, ոգեշնչող օրինակներով և հրաշքներով: Մեզանից յուրաքանչյուրը կարող է անցնել Եկեղեցու ռահվիրաների անցած ճանապահով և ավելի լավ հասկանալ, թե մենք՝ Արևելյան Եվրոպայի Տարածաշրջանի ռահվիրաներս, իրականում ինչպես կարող ենք ապրել ներկայումս: Եթե այս դասերի ընթացքում մենք անկեղծորեն պատրաստ ենք հետևել Տիրոջ հրահանգներին, մենք կզգանք Աստծո Հոգին և «նա կուղղէ [մեր] ճանապարհները» դեպի արդարություն (Առակաց 3.5-6): Եվ մենք կստանանք պատասխանները մեր ամենակարևոր հարցերին: Այս է իմ վկայությունը, ես զգում եմ այն իմ սեփական կյանքում և տեսնում եմ այն սեմինարիայի և ինստիտուտի բոլոր ջանասեր ուսանողների կյանքում: Գալիք օրերում անհնար կլինի հոգևորապես գոյատևել առանց կենդանի վկայության: ■

ՏԵՂԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ

«Սիրել միմյանց և ծառայել մեկմեկու»

Նարեկ Ծատուրյան

Հայաստան Երևան Շրջանի նախագահության առաջին խորհրդական, Ո՞րն է վարդապետությունը:

Հիսուս Քրիստոսն իր երկրային կյանքի մայրամուտին և ծառայության ավարտին աշակերտներին տված Իր վերջին հանձնարարությունը ամփոփեց մի հիմնական պատվիրանով, ասելով. «Սիրիր քո Տէր Աստուծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը եւ քո բոլոր մտքովը: Սա է առաջին եւ մեծ պատուիրանը: Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պէս: Այս երկու պատուիրանքից կախուած են բոլոր օրէնքը եւ մարգարէքը» (Մատթեոս 22.37-40): Իմ կարծիքով, սրանք շատ կարևոր ուսմունքներ են, որոնց մենք պետք է հետևենք մեր առօրյա կյանքում, որպեսզի ավելի մոտենանք մեր Փրկիչին:

Սերը Ծառայություն է

Ըստ էության, սերը մի զգացում է, որի չափման միավորը մեզ դեռ հայտնի չէ. այն մենք չենք կարող հանձնարարել, հրահանգել,

պատվիրակել սպասավորող զույգերին, երեցների քվորումին կամ Սփոփող Միությանը, որպեսզի նրանք վերցնեն և կյանքի կոչեն կամ փոխանցեն այն ուրիշներին: Ապա, ինչպե՞ս ենք մենք արտահայտում մեր սերը: Ինչպե՞ս ենք մենք ապացուցում մեր սերը: Իմ կարծիքով, այս պահին ձեր ներքին ձայնը հուշում է ձեզ այդ հարցերի պատասխանը և, դա իհարկե, մեր գործերն են: Իսկ այդ գործերը մենք իրականացնում ենք մեր մերձավորներին **ծառայելու** արդյունքում: Այսպիսով, ակնհայտ է, որ ծառայությունը սիրո արտաքին դրսևորումն է:

Ինչո՞ւ է ծառայությունը կարևոր:

Նախագահ Մարիոն Ռոմնին իր մեկնաբանության մեջ հստակ ընդգծել է ծառայության կարևորության հիմնական չափանիշները:

Նա ասել է՝ «Ծառայությունն այն *մանրաթելն* է, որի միջոցով ստեղծված է վեհացված կյանքը սելեստիալ արքայությունում: Իմանալով, որ ծառայությունն է մեր Երկնային Հորը գոհացնում և իմանալով, որ մենք ցանկանում ենք գտնվել այն վայրում, որտեղ Նա է և լինել այն Էակը, որը Նա է, ապա մեզ ինչո՞ւ պետք է պատվիրան տրվի ծառայելու: Մի փառահեղ օր մեր սրտերի մաքրության պատճառով այդ ամենը կգա բնականոն ձևով: Այդ օրը պատվիրանի կարիք չի լինի, քանի որ մենք ինքներս կհամոզվեք, որ իսկապես *երջանիկ* ենք, երբ ներգրավված ենք անշահախնդիր ծառայության մեջ» (*Ensign*, May 1976):

Որո՞նք են ծառայության սկզբունքները:

Նախագահ Ռոմնիի խոսքերը և իմ անձնական ուսումնասիրությունները ու փորձը կարևորում են չորս հիմնական սկզբունքներ, որոնք առնչվում են ծառայությանը:

Ուրախություն ծառայությունից: Միանշանակ, ծառայությունը *աստվածային* սկզբունք է: Նախագահ Ռոմնին նշում է, որ սելեստիալ արքայությունում կյանքը ստեղծված է ծառայության միջոցով: Նա նաև ընդգծում է, որ անշահախնդիր ծառայությունը *երջանկություն*, ուրախություն է բերում և մարդուն շնորհում է ինքնապահովման *ազատություն*: Այսպիսով, մարդկանց օգնելու իրավունքը (աստվածային սկզբունք) և հնարավորությունը (ինքնապահովման ազատությունը) հիրավի շնորհում է այն բավարարվածությունը, որին հետևում է անկեղծ ուրախությունը: Այդ ճշմարտության մեջ համոզվել եմ իմ միսիայի տարիներին: Միսիոներական կյանքի հոգևոր և ֆիզիկական հագեցած օրվա ավարտին զուգընկերոջս հետ տուն վերադառնալուց հետո ես մի այնպիսի մեծ բավարարվածություն ու երջանկություն էի զգում, որը երկար տարիներ անց դեռևս ջերմացնում է իմ հոգին:

Մեր Եկեղեցու ծառայության ավանդույթները ծառայելու բազմաթիվ հնարավորություններ են տալիս: Գալով այս Երկիր, Երկնային Հոր զավակները չեն կորցրել իրենց աստվածային բնույթը: Օրհնվելով աշխարհիկ ու հոգևոր պարգևներով, մենք պարտավորություն ունենք միմյանց հանդեպ և կարիքի դեպքում պետք է օգնենք իրար: Այդ սկզբունքի մեծ օրինակ է հանդիսանում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցու լայնածավալ ու հրաշալի ծառայության ավանդույթը: Մենք տեղյակ ենք, որ մեր եկեղեցու հոգևորականությունը և ղեկավարները ծառայում են անվճար, գիտենք, որ հազարավոր Վերջին Օրերի Սրբեր

Նարեկ Ծատուրյան

իրենց անշահախնդիր ծառայությունն են մատուցել և մատուցում են աշխարհով մեկ բնական աղետներից տուժած համայնքներին և իրենց կյանքի հազարավոր ժամեր զոհաբերել են իրենց քույրերին ու եղբայրներին օգնելու համար, և իհարկե, զոհաբերել են իրենց նյութական միջոցներից, որպեսզի թեթևացնեն աղքատի ու կարիքավորի բեռը Եկեղեցու հումանիտար օգնության ծառայության միջոցով:

Նոր տեխնոլոգիաները քարոզելու և ծառայելու նոր եղանակներ են ընձեռում: Նախքան Եկեղեցուն միանալը, ավետարանով ապրելը ու հակադրության օրենքի մասին իմանալը, ես մի ներքին օրենք ունեի, որն անվանում էի հավասարակշռության օրենք: Ըստ այդ օրենքի և իմ համոզմունքի, երկրի վրա ապրող

բոլոր մարդկանց տրված է հավասար: Օրինակ, եթե մեկը խելացի է, ուրեմն պարտադիր չէ, որ նա լավ վազել իմանա և հակառակը: Եթե մարդը ուժեղ է լեզուներից, ուրեմն, պարտադիր չէ որ նա ուժեղ լինի մաթեմատիկայից: Եվ այդպես շարունակ կյանքի բոլոր ոլորտներում կիրառելի է այդ սկզբունքը: Այսպիսով, եթե որևէ մեկը կամ որևէ երևույթ առավելություն ունի ինչ-որ ոլորտում, ապա մեկ ուրիշ ոլորտում նա կաղում է: Այդ նույնն այսօր կիրառելի է նորագույն տեխնոլոգիաների դեպքում: Անժխտելի փաստ է, որ նորագույն տեխնոլոգիաները մեզանից խլել են մեր ընտանիքների ու մերձավորների հետ դեմ առ դեմ շփվելու անձնական և մտերմիկ հարաբերությունները, բայց դրա փոխարեն մեր առջև բացել են անսահման հնարավորություններով աշխարհի դռները: Դրանց օրինակները բազմաթիվ են՝ բանկային և առևտրային վճարումների դյուրացում, վարչարարության և ժամանակի կրճատում և այլն: Բայց կա նորագույն տեխնոլոգիաների մի առավելություն, որը մենք կարող ենք օգտագործել Աստծո աշխատանքը կատարելիս: Տեխնոլոգիաների միջոցով մենք կարող ենք կապ հաստատել աշխարհի տարբեր կողմերում ապրող մարդկանց հետ և քարոզել ավետարանը բոլորին: Համացանցը ստեղծվել է 1983 թվականին և այն ստեղծվել է մեր տնտեսության համար, մեր երիտասարդների համար, և մենք կարող ենք այդ գործիքն օգտագործել Նրա աշխատանքում, ով ներշնչել է դրա ստեղծումը, և որի հնարավորությունը մեզանից առաջ ապրողները չեն ունեցել:

«Մենք չպետք է ձանձրանանք բարիք գործելուց»: Այնքան ժամանակ, որքան մենք կքայլենք այս երկրի վրա բարիք գործելով, Հիսուս Քրիստոսը կքայլի երկրի վրա՝ մեր փոխարեն բարիք գործելով: Այնքան ժամանակ, որքան մենք բարիք կգործենք մեր մերձավորների համար, այդ ծառայությունը մենք կմատուցենք Հիսուս Քրիստոսին, քանի որ դատաստանի օրը Նա ասել է իր աջ կողմում կանգնած մարդկանց. «Ճշմարիտ ասում եմ ձեզ, որովհետեւ այս իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք» (Մատթեոս 25:40):

Աղոթում եմ, որ մենք բոլորս արժանանանք Տիրոջ այդ մեծ օրհնությանը՝ կանգնելու Նրա աջ կողմում և ժառանգելու Նրա թագավորությունը: Եվ աղոթում եմ, որ բոլորս հնարավորություններ փնտրենք զգալու այն նույն ուրախությունը, որի մասին խոսեց Նախագահ Ռոմնին, այն նույն ուրախությունը, որը ես զգացել եմ իմ միսիայի ծառայության ժամանակ, և որը զգացել են բազմաթիվ մարդիկ իրենց ծառայության ժամանակ: ■

Պետք է հավատանք

Ամալյա Երանոսյան
Արաբկիր ճյուղ

Քույրս ինձանից չորս տարի շուտ էր միացել Եկեղեցուն: Նա ինձ պատմում էր Եկեղեցու մասին, բայց ես սկզբում շատ թերահավատորեն էին մոտենում, թեև հավատք ունեի Աստծո հանդեպ, քանի որ մեր ծնողները հավատքով էին և օրինակ էին մեզ համար: Այնուհետև, տեսնելով, թե քույրս ինչպես է վկայություններ ստանում, ապրելով ըստ պատվիրանների, ծոմ պահելով, ես նույնպես ոգեշնչվեցի և սկսեցի ուսումնասիրել սուրբ գրությունները, ինչպես է Եկեղեցին գործում, ինչպես է կազմակերպված: Այն կարգուկանոնը, որ ես տեսա Եկեղեցում, հուշում էր ինձ, որ Եկեղեցին ճշմարիտ է:

Մի կիրակի օր Արաբկիրի տարածքում ես փորձում էի գտնել Եկեղեցու շենքը, որի բացումը նոր էր եղել, և շրջելով այս ու այն կողմ, չէի գտնում: Այդ օրը ես ինձ շատ վատ էի զգում, և չկարողացա շարունակել որոնումը, գնացի քրոջս տուն, որն այդ տարածքում էր, որպեսզի հանգստանամ: Որոշ ժամանակ անց դուռը թակեցին միսիոներները, նրանք պատահական եկել էին այցելության: Նրանք ինձ առողջության օրհնություն

Ամալյա Երանոսյան

տվեցին, որից հետո ես անմիջապես լավ զգացի: Շատ էի զարմացած, տեսնելով այդ հրաշքը և այն, որ ես այդքան փնտրել էի և հանդիպեցի նրանց այդպես պատահական: Ինչպես գրված է §խնդրեք և դուք կստանաք. թակեք և ձեզ կբացվի: (ՎԼՈՒ 49.26):

Շուտով ես մկրտվեցի, մկրտվեցին նաև իմ երեխաները: Ես շատ եմ սիրում Եկեղեցին և սուրբ գրությունները: Դուստրերիցս մեկն արդեն ծառայել է միսիայում՝ Միացյալ Նահանգներում: Նրա համար դա մի կարևոր փորձառություն էր, ինչպես նա է պատմում, և ինչպես ես եմ տեսնում: Մենք միշտ զգում ենք Սուրբ Հոգու ներգործությունը մեր կյանքում: Այն օգնում է մեզ լուծել առօրյա խնդիրները, ոգևորում և ուժ է տալիս:

Եվ ցանկանում եմ մեջբերել սուրբ գրության ևս մի հատված, որը սիրում եմ՝ Ալմա 32.21,22-ից. §Եվ այժմ, ինչպես ես ասացի հավատքի վերաբերյալ՝ հավատքը բաների մասին կատարյալ գիտելիք ունենալը չէ. հետևաբար, եթե դուք ունեք հավատք, դուք հույս ունեք բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են: Եվ այժմ, ահա, ես ասում եմ ձեզ, և ես կկամենայի, որ դուք հիշեիք, որ Աստված ողորմած է բոլոր նրանց հանդեպ, ովքեր հավատում են նրա անունին:: Մեր ամուր հավատքը դռներ է բացում մեր առաջ դեպի լույսը, խաղաղ կյանքը և դեպի մեր Փրկիչը: ■

Ես լույսը Ավետարանում եմ գտնում

Աննա Իշխանյան, Արաբկիր ճյուղ

2008 թվականին ես հանդիպեցի երեցներին Կոմիտասի պողոտայում, նրանք ինձ հարցնում էին, թե ինչպես գտնեն ինչ-որ հասցե: Ես նրանց ձեռքին գրքեր տեսա և հետաքրքրվեցի, հարցեր տվեցի: Երեցներն ինձ պատմեցին եկեղեցու մասին և հրավիրեցին եկեղեցի:

Երբ մկրտվեցի, ես ինձ հոգով ավելի նորացված տեսա, սկսեցի զգալ որոշ լավ ու շատ կարևոր բաներ, որ նախկինում չէի զգում: Եկեղեցում միշտ ծառայել եմ երաժշտության հետ կապված կոչումներում: Նույնիսկ երբ դեռ մկրտված չէի, հաճույքով ծառայում էի ևօրհներգեր նվագում ժողովներին: Մկրտվելուց հետո մինչ օրս շարունակում եմ ծառայել: Այս տարիների ընթացքում ծառայել եմ որպես երգչախմբի ղեկավար, ուսումնասիրել եմ եկեղեցու օրհներգերը:

Իմ սիրած հիմներից է՝ §Հավատք առ Քրիստոս:-ը, որի թարգմանությունը չունեինք, և քանի որ ինձ դուր էր եկել, ես ինքս թարգմանեցի այն: Սիրում եմ §Փրկիչ, խոնարհ աղոթում ենք: հիմնը, որը երգում ենք հիմնականում հաղորդության ժամանակ: Հիմները տարբեր են, սակայն ամեն մի հիմնը կարծես առանձին ուղի է բացում առ Աստված ու ամեն մի հիմնը առանձին ուղերձ է պարունակում և ուրույն աղոթք է:

Ես ցանկանում եմ, որ հաղորդության ժողովի մասնակիցներն էլ ավելի լուռ լինեն և ավելի ակնածալից լինեն հաղորդության օրհներգերի կատարման ժամանակ, քանի որ այդպես կարող ենք ավելի մոտենալ Աստծուն մեր ամբողջ մտքով և ամբողջ սրտով:

Սուրբ գրությունները բոլորն էլ սիրելի են ինձ համար, սակայն ավելի հաճախ եմ կարդում

Աննա Իշխանյան

սաղմոսներ և առակներ: Դրանք ինձ կյանքի վերաբերյալ հուշումներ են հաղորդում: Ծնողներիս մահից հետո ավելի խորը զգացի ավետարանի լույսը: Ես լույսը ավետարանում եմ գտնում: Ես գիտեմ, որ այն ճշմարիտ է, գիտեմ, որ մենք պատահական չենք այս երկրի վրա, և ամեն մարդ իր առաքելությունն ունի այստեղ: Եվ մենք այստեղ ենք, հաստատելով, որ Քրիստոսի հետևորդներն ենք: ■

Դարձի՛ր լույս

Վալյա Ավագյան
Արտաշատ ճյուղ

Երբ ուսումնասիրեցի սուրբ գրությունները և մկրտվեցի, ես մեծ վկայություն ունեցա Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու վերաբերյալ: Եկեղեցին խոշոր կենտրոն է, որի շուրջ հավաքված են Հիսուս Քրիստոսի հետևորդները: Վերջիններս լույս ունեն իրենց մեջ և մյուս մարդկանց էլ են լուսավորում: Եկեղեցին հիմնվել է առաքյալների և մարգարեների հիմքի վրա և անկյունաքարը Հիսուս Քրիստոսն է: Նա մեր Մեսիան է և Փրկիչը:

Ես իմ կյանքը կենտրոնացրել եմ Հիսուս Քրիստոսի հիմքի վրա և գիտեմ, որ Նա կուղղորդի ինձ: Ես գիտեմ, որ Նա Տիրոջ Որդին է և աշխարհ էր եկել մեծ առաքելությամբ: Նրա պատվիրաններն ու ավետարանի սկզբունքները շատ կարևոր են մեզ համար: Մենք պետք է ամուր հավատք ունենանք, երբեք չմոռանանք ապաշխարության մասին, մկրտության և Սուրբ Հոգու թանկագին պարգևի մասին: Մենք պետք է ջանանք ապրել արժանի կյանքով և համբերել մինչև վերջ: Եկեղեցու սրբերի կարևոր ծառայություններից մեկն է տարածել Նրա լույսը: Փա՛ռք նրանց, ովքեր Նրա լույսն են սփռում, հաղթահարելով խավարի խոչընդոտները և Եկեղեցի են բերում նոր անդամների:

Ես գիտեմ, որ հավատքը մի մանանեխի սերմ է, որը խնամքի կարիք ունի: Սուրբ Հոգին միշտ օգնում է ինձ և հուշում, որ չշեղվեմ ճիշտ ուղուց: Վստահ եմ, որ Եկեղեցու մյուս անդամները ևս գիտեն սրա մասին, և մենք պետք է ուրիշ մարդկանց նույնպես ասենք այս մեծ օգնության մասին, որն ունենք մեր կյանքում:

Ես շատ եմ սիրում Հանգստության օրը՝ կիրակին: Երբ հաղորդության ժամին լռություն և ակնածանք է տիրում, հնչում է հոգևոր երաժշտություն, սիրտս վեհությամբ է լցվում: Այդ սուրբ և ակնածալից երաժշտությունը վեհացնում է մեր ներքին աշխարհը: Դրա միջոցով մենք մոտենում ենք Տիրոջը: §Եւ օրհներգեցին ու ելան Ձիթենեաց լեռը: (Մատթեոսի 26.30):

Թեև ես մենակ եմ ապրում այժմ, սակայն միայնակ չեմ, քանի որ ունեմ սուրբ գրությունները և իմ ծխի ընտանիքը: Ես հաճախ եմ աղոթքով, երգելով ու ծոմ պահելով հաղորդակցվում Երկնային Հոր հետ: Ես միշտ ուրախություն եմ գտնում Տիրոջը ծառայելով: Ես վկայում եմ, որ Աստված մեծ սեր է և հրաշագործ: Ես գիտեմ, որ սրտանց աղոթելով մենք կստանանք մեր աղոթքների պատասխանները: Մորմոնի Գրքից իմ սիրած հատվածն է 3 Նեփի 14.7-8՝ §Խնդրեք, և ձեզ կտրվի. փնտրեք, և դուք կգտնեք. թակեք, և ձեզ համար կբացվի: Քանզի ամեն մեկը, որ խնդրում է, ստանում է. և նա, ով փնտրում է, գտնում է, և նրան, որ թակում է, կբացվի:: Ես աղոթում եմ, որ ճշմարիտ ուղին փնտրող մարդիկ գտնեն այն: Մենք՝ սրբերս, պետք է լուսավորենք աշխարհը և արժանի լինենք Հիսուս Քրիստոսի մեծ սիրուն: ■

Աստծուն ճանաչեք և Նրան վստահեք

Գայանե Վարդանյան
Արաբկիր ճյուղ

Միայն Աստծուն ճանաչելու արդյունքում կարող ենք ունենալ Նրա խոսքի,

անձի հանդեպ վստահություն, և միայն այս դեպքում է հնարավոր տեսնել

Աստծո հրաշքները, ընդունակ լինել գոհանալու և շնորհակալ լինելու Նրա

կատարած գործերի համար: Եթե չենք ճանաչում Աստծուն, տեղի է ունենում

հակառակը. . . . Աստված երկու դեպքում էլ մնում է նույն օրհնող, հրաշքներ գործող Աստվածը, տարբեր է լինում միայն մեր ընկալումը, վերաբերմունքը այդ ամենի հանդեպ կամ մենք ունենք աչքեր և տեսնում ենք, կամ մենք ունենք աչքեր և չենք տեսնում. . . .

Ամբողջ Ելից գրքում նկարագրվում է, թե Աստված ինչպիսի հրաշքներ գործեց Իսրայելի ժողովրդի աչքի առաջ, Իր զորավոր բազուկով ազատեց նրանց Եգիպտոսում 400 տարվա գերությունից: Եգիպտոսի վրա բերեց տասը պատուհասները, ցերեկը՝ ամպի սյունը և գիշերը՝ կրակի սյունը նրանց առջևից չպակասեցրեց, Կարմիր ծովի միջով՝ ցամաքով անցան, անապատում ժայռից ջուր բխեցրեց նրանց համար,

երկնքից մանանաթափեց, մսով կերակրեց նրանց, քառասուն տարի նրանց հանդերձները չինացան, այս ամենից բացի նրանց խոստացավ կաթ ու մեղր բխող Քանանի երկիրը:

Լինելով Աստծո ընտրյալ ժողովուրդ, քառասուն տարի նրանք քայլեցին անապատում, տեսնելով այդքան հրաշքներ, նրանք այդպես էլ չճանաչեցին կենդանի Աստծուն և հերթական դժվարությանը հանդիպելիս, նրանք Աստծուն ոչ թե դիմեցին, այլ տրտնջացին Նրա դեմ, ոչ թե գոհացան, այլ բողոքեցին, ամեն անգամ հիշելով իրենց ստրկության երկիրը, իրենց Եգիպտոսը և ամեն անգամ ցանկանալով նորից վերադառնալ այնտեղ. . .

Նրանց սրտերում այդպես էլ տեղ չգտնվեց Աստծո բնակության համար, այլ բնակվեց Եգիպտոսը՝ մեղքի և անեծքի երկիրը: Այստեղից հետևություն ենք անում, որ Աստծո կատարած հզոր հրաշքներն անգամ չեն կարող ազդել հավատացյալի կյանքի վրա, եթե նա ինքը չի ուզում դրանք տեսնել, եթե նա չի ուզում ճանաչել կենդանի Աստծուն, չի ցանկանում հրաժարվել իր «եգիպտոսից». . .

Այսպիսով, չփոխվելու վտանգ կա հավատացյալի կյանքում, չնայած այն բանին, որ հաճախում ենք եկեղեցի, պարտաճանաչ կերպով մասնակցում ենք բոլոր արարողություններին, կարդում և խոսում ենք սուրբ գրությունների մասին, բայց չունենք Աստծուն ճանաչելու անձնական փորձ, որը կօգնի մեզ վստահել Նրան բոլոր իրավիճակներում, որի արդյունքում կփոխվի մեր մտածելակերպը, մեր կյանքը և Աստծո անունը զուր տեղը չենք վերցնի մեզ վրա. . .

Հիշենք Դավթի և Գողիաթի պատմությունը (Ա Թագավորաց 17): Այս պատմությունը հրաշալի օրինակ է Աստծուն ճանաչող և վստահող հավատացյալի մասին: Իսրայելացիները և փղշտացիները դուրս էին եկել միմյանց դեմ պատերազմի: Փղշտացիները ունեին մի զինվոր, ով դարձել էր Իսրայելի ահ ու սարսափը: Նրա անունը Գողիաթ էր, նա հսկա էր, ուներ մեկ կանգուն ու մեկ թիզ բարձրություն, նրա գլխին կար պղնձե սաղավարտ, նրա հագած զրահի ծանրությունը հինգ հազար սիկղ պղինձ էր, նրա ոտքերի վրա պղնձի սոնապաններ և նրա ուսերի մեջ պղնձի գեղարդ կար, նա ձեռքին բռնած ուներ նիզակ և տեգ, և նրա վահանը կրողը գնում էր նրա առջևից. . .

Գայանե Վարդանյանը ամուսնու հետ

Քառասուն օր շարունակ նա հայհոյում և վախի մեջ էր պահում Աստծո հավատացյալ ժողովրդին, պահանջելով, որ Իսրայելի բանակից մեկ հոգի դուրս գա և իր հետ մենամարտի, բայց ոչ ոք չէր համարձակվում. . . Դավիթը, ով դեռ պատանի էր, ականատես լինելով այս իրադարձությանը, հայտարարում է, որ ինքը կգնա և կսպանի այդ անթլպատ փղշտացուն, քանի որ նա նախատեց կենդանի Աստծո զորքերին: Դավիթը ձեռքն է առնում իր ցուպը, հինգ հատ քար ընտրում, պարսը ձեռքին մոտենում է հսկա Գողիաթին և ասում նրան.

– Դու սրով և նիզակով և գեղարդով ես գալիս ինձ վրա, իսկ ես քեզ վրա Զորաց Տիրոջ Իսրայելի զորքերի Աստծո անունովը, որին դու նախատեցիր, և Դավիթը քարն առնում է, իր պարսի մեջ դնում, նետում և քարը ուղիղ խրվում է Գողիաթի ճակատի մեջ և նա վայր է ընկնում. . . Այսպիսով, պարզվում է, որ Դավիթը միակն էր, ով ճանաչում էր կենդանի Աստծուն, դեռ պատանի հասակում նա արդեն փորձ ուներ, գիտեր Աստծուն վստահել, գիտեր Աստծո խոսքի հետ ճիշտ վարվել, Նրա զորությունից օգտվել. . .

Եթե մենք կարողանանք դժվարությունների ժամանակ վստահել Աստծուն, մենք

կհաղթահարենք դրանք և դրանց ծավալը մեզ չի վախեցնի, իսկ հաղթահարված ամեն մի դժվարություն կավելացնի մեր հավատքն ու փորձը. . .

Այսպիսով՝ Աստծուն ճանաչելը և Նրա հանդեպ ունեցած մեր վստահությունը կօգնի մեզ հավատքի ուղին արժանապատիվ անցնել. . . ■

ARMENIAN